ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/219

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9969-2022 գրությամբ «Խաչմիք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 25.05.2022թ. թիվ 09/658 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/9969-2022 գրությամբ նախաձեռնել է «Խաչմիք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Խաչմիք» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Խաչմիք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/219 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է վերը նշված դիրքորոշումը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.05.2022թ. թիվ 09/658 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ այն մասին, որ 2022 թվականի ապրիլի 11-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Խաչմիք» ՍՊ ընկերության /այսուհետ' Ընկերություն/ միջև կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագիրը: Պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Ըստ պայմանագրի՝ մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մայիսի 11-ին: Մայիսի 13-ին Ընկերությանը տրամադրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ մինչև մայիսի 23-ը ներառյալ, ինչի մասին Ընկերությունը պատշաճ ծանուցվել է պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, և գրության բնօրինակը ուղարկվել է հայտով ներկայացված հասցեին:

Սակայն Ընկերության կողմից մատակարարում կրկին չի իրականացվել:

Հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությունը՝ Համալսարանը լուծել է Ընկերության հետ կնքված վերոհիշյալ պայմանագիրը:

Հինք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ սույն թվականի մայիսի 24-ին Համալսարանը չմատակարարված ապրանքի մասով

պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակել է տեղեկագրում և ուղարկել է նաև Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստին:

Քանի որ թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագիրը լուծվել պայմանագրով նախատեսված պարտավորությունների խախտման հիմքով, գնումների օրենսդրության պահանջներին համապատասխան Ձեզ ենք ներկայացնում տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ հիմքերը՝ թիվ ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6 պայմանագիրը և պայմանագիրը լուծելու մասին Համալսարանի ծանուցումը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/219 ընթացակարգի շրջանակներում 03.06.2022թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/219 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/219 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Խաչմիք» ՍՊԸ-ի միջև 11.04.2022թ. կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրի N 2 հավելվածով՝ մատակարարման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրում:

3. Պատվիրատուն «Խաչմիք» ՍՊԸ-ին ուղղված 13.05.2022թ. թիվ 09/610 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»

հիմնադրամի և «Խաչմիք» ՍՊ ընկերության միջև սույն թվականի ապրիլի 11-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքատեսակների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանված սույն թվականի մայիսի 11-ը:

Հիմնադրամի և «Խաչմիք» ՍՊԸ-ի միջև մինչ օրս չի իրականացվել պայմանագրով սահմանված որևէ ապրանքատեսակի հանձնման-ընդունման գործընթաց:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով սույն թվականի ապրիլի 11-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրի /2.1.1/, /2.1.5/, /2.4.1/ կետերը, խնդրում ենք Ձեզ մինչև սույն թվականի մայիսի 23-ը ներառյալ կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Հակառակ դեպքում կկիրառվեն թիվ «ԷԱՃԱՊՁԲ-222/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրով սահմանված համապատասխան դրույթները:

4. Պատվիրատուն «Խաչմիք» ՍՊԸ-ին ուղղված 24.05.2022թ. թիվ 09/651 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 2022 թվականի ապրիլի 11-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Խաչմիք» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագրի Ձեր ընկերությունը պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Ըստ պայմանագրի՝ մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մայիսի 11-ին: Մայիսի 13-ին Ձեզ տրամադրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ մինչև մայիսի 23-ը ներառյալ, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, և գրության բնօրինակը ուղարկվել է հայտով ներկայացված հասցեին: Սակայն Ձեր կազմակերպության կողմից մատակարարում կրկին չի իրականացվել:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է 11.04.2022թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է Համալսարանի ռեկտորի 13.05.2022թ.-ի գրությունը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9969-2022 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 25.05.2022թ. թիվ 09/658 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա

մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Խաչմիք» ՍՊԸ-ի միջև 11.04.2022թ. կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի N 2 հավելվածով՝ մատակարարման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրում:

Պատվիրատուն «Խաչմիք» ՍՊԸ-ին ուղղված 13.05.2022թ. թիվ 09/610 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Խաչմիք» ՍՊ ընկերության միջև սույն թվականի ապրիլի 11-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրով նախատեսված բոլոր ապրանքատեսակների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանված սույն թվականի մայիսի 11-ը:

Հիմնադրամի և «Խաչմիք» ՍՊԸ-ի միջև մինչ օրս չի իրականացվել պայմանագրով սահմանված որևէ ապրանքատեսակի հանձնման-ընդունման գործընթաց:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով սույն թվականի ապրիլի 11-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրի /2.1.1/, /2.1.5/, /2.4.1/ կետերը, խնդրում ենք Ձեզ մինչև սույն թվականի մայիսի 23-ը ներառյալ կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Հակառակ դեպքում կկիրառվեն թիվ «ԷԱՃԱՊՁԲ-222/8-4-ԵՊԲՀ-6» գնման պայմանագրով սահմանված համապատասխան դրույթները:

Պատվիրատուն «Խաչմիք» ՍՊԸ-ին ուղղված 24.05.2022թ. թիվ 09/651 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 2022 թվականի ապրիլի 11-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ և «Խաչմիք» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ միջև կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագրի Ձեր ընկերությունը պարտավորվել է 30 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները:

Ըստ պայմանագրի՝ մատակարարման վերջնաժամկետը լրացել է սույն թվականի մայիսի 11-ին: Մայիսի 13-ին Ձեզ տրամադրվել է մատակարարման նոր, ողջամիտ ժամկետ մինչև մայիսի 23-ը ներառյալ, ինչի մասին Ձեր ընկերությունը պատշաճ ծանուցվել է պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, և գրության բնօրինակը ուղարկվել է հայտով ներկայացված հասցեին: Սակայն Ձեր կազմակերպության կողմից մատակարարում կրկին չի իրականացվել:

Վերոգրյալով պայմանավորված և առաջնորդվելով «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) պարբերությամբ՝ Համալսարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է 11.04.2022թ. կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Կից ներկայացվում է Համալսարանի ռեկտորի 13.05.2022թ.-ի գրությունը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 24.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին</u>***

<u>մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի</u>***:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Խաչմիք» ՍՊԸ-ն խախտել է իր և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև 11.04.2022թ. կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2022/8-4-ԵՊԲՀ-6» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Խաչմիք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9969-2022 գրությամբ «Խաչմիք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Խաչմիք» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**